...ան բոլորը։
ցուցանիշների
...իրենցիան չին-
...ախուսեց դրա-
...իսկ լավագույն
...ցակամ Սար-
...ալասանյանին,
...ին և Յուրա
...ին տուրիս-
...ության մեջ

...ՍԱՐԳՍՅԱՆ
ՆՈՐԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ
Ֆուչիկի անվան պատանի
...թղթակիցների դպրոցի սաներ

...ցման արտադրամասում։ Իրոք որ

 են մեր ինստիտուտի սամբոյի խմբակի անդամները։

Սպորտային անգիչում պայքարում մինչև 100 կգ քաշային կարգում ճանրապետության չեմպիոնի կոչումը նվաճեց է 86 խմբի ուսանող Մերուժան Ամիրխանյա-

...հանրապետական և համամիութենական մրցումներ սամբո մարզաձևից, որոնց կմասնակցեն նաև մեր ուսանողները։

Ռ. ԳԱԼՍՏՅԱՆ
*Ֆիզդաստիարակության ամբիոնի ավ. դասախոս*



Ծուրջ մեկ ամիս մեքենաշինական ֆակուլտետի ՄՍ 91—1 խմբի շինջոկատայինները աշխատեցին Երևանյան մետրոպոլիտենի «Լենինի հրապարակ» տեղամասում։ Առաջին իսկ օրերից ուսանողները ցուցաբերեցին աշխատանքային արիություն։ Մեր տղաների մոտ խանդավառությունն այնքան բարձրացավ, որ սկսեցին

# ԱՐԺԱՆԱՑԱՆ ՊԱՏՎՈԳՐԵՐԻ

միանգամից երկու հերթափոխում աշխատել։ Նրանց հայրենանվեր աշխատանքն ըստ արժանվույն գնահատվեց, իսկ լավերից լավագույնները՝ խմբի հրամանատար Գագիկ Միքայելյանը, մարտիկներ Ռաֆայել Թադևոսյանը, Մարտիկ Մկրտչյանը, Միքայել Գյուրջյանը և Սարգիս Զեյթունյանը արժանացան ՀԼԿԵՄ կենտկոմի պատվոգրերին։

ԽԱԺԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀՄՖ ժուռնալիստիկայի բաժնի 2-րդ կուրսի ուսանող

# Եվս մի անմոռաց օր...

Արդեն ավանդական է դարձել այն երևույթը, որ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Մ. Տեր-Հովհաննիսյանի խմբերը կանոնավորապես այցելում են մայրաքաղաքի տեսարժան վայրերն ու ցուցահանդեսները։ Ուսանողների գեղագիտական դաստիարակությանը նպաստող այս միջոցառումների անմիջական կազմակերպիչն ու ակտիվ մասնակիցն է ինքը՝ Մ. Տեր-Հովհաննիսյանը։ Իր դիտողություններով, բացատրություններով, բանավեճեր ստեղծելու կարողությամբ նա նաև օժանդակում է, որպեսզի իրոք օգտակար ու հաճելի դառնա միջոցառումը։

Այս անգամ մենք՝ ՀՏ 04—3 խմբի ուսանողներս, այցելեցինք ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի ցուցահանդեսը։ Նկարներն անմիջապես կլանեցին մեզ, կախարդեցին ու մոռացնել տվին շրջապատը։

Գույներ չկային այդ նկարներում, և գույներ պետք էլ չէին նրանց... Մարդկային հոգեբանությունն այնպիսի խորությամբ էր տրված այնտեղ, որ արվեստին ներկայացվող մյուս պահանջմունքները մոռացվում էին։

*Նկարները դիտելուց հետո զրուցեցինք հեղինակի հետ։*

*— Ճշմարտությունն ու ազնվությունը մեկի մեջ չի ծնվում, այն կա յուրաքանչյուրիս մեջ։ Արվեստագետի պարտքն է տեսնել մարդու մեջ եղած լավը և կարողանալ տեսցնել ուրիշներին,— իր խոսքն ամփոփեց նկարիչը։*

*Վստահ կարելի է ասել, որ արվեստի այս սկզբունքը լրիվին պահպանված է Ռ. Խաչատրյանի նկարներում։ Ահա թե ինչու էինք մենք բոլորս այնպես ինքնամոռաց ու քարացած կանգնել նրա կտավների առջև։*

*Պահեր կան մարդու կյանքում, հագեցած ու աղեցուն պահեր, որոնք ընդմիշտ մնում են մեր հիշողության խորքերում։ Այսպիսի պահերի մասին է, որ մարդ կարող է վստահ ասել՝ ես ապրեցի մի սքանչելի օր։*

ՎՈԼՈԴՅԱ ՉԱՏԻԿՅԱՆ
ՀՏ 04—3 խ.

# ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԸ

*Բուլղարացի երկվորյակ եղբայրներ՝ բժիշկներ Գեորգի և Դիմիտր Իկոնոմովները տվյալներ են հավաքել և մշակել Բուլղարիայում 90 տարվա ընթացքում (1882—1972) ծնված երկվորյակների մասին։ Պարզվել է, որ այդ տարիներին Բուլղարիայում լույս աշխարհ են եկել 30 հազար երկվորյակներ։ Բացի այդ, ծնվել են ավելի քան 4000 երեքական և 92 չորսական երեխաներ։*

*Բուլղարական «Օտեչեստվո» թերթը գրում է, որ այժմ երկրագնդի վրա ապրում են 70 միլիոնից ավելի երկվորյակներ։*

ԱՄԵՆԱՓՈՔՐ ՔԱՂԱՔԸ

*Չեխոսլովակիայի ամենամեծ քաղաքը 1,2 միլիոն բնակչություն ունեցող Պրագան է։ Իսկ ամենափո՞քրը։ Արևմտաչեխիական մարզում գտնվող Ռոբշտեյն քաղաքն է։ Այստեղ կա ընդամենը 25 բնակիչ։ Դա ավելի քան զարմանալի է, եթե նկատի ունենանք, որ բնակավայրը քաղաքի ստատուս է ստացել դեռևս 1337 թվականին։ Այն գտնվում է ժայռոտ թեք սարալանջին, որը թույլ չի տվել Ռոբշտեյնին բառիս բուն իմաստով քաղաք դառնալու։ Այժմ Ռոբշտեյնը հանգստի և տուրիզմի հանրաճանոթ վայր է, որը հրապուրում է հետաքրքիր ճարտարապետական և պատմական հուշարձաններով։*


Խմբագիր՝ Գ. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Редактор Г. С. ВАРТАНЯН

Տպաքանակ 2000, պատվեր 1236
ՎՖ 08857

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ.— 375009 Երևան—9 Տերյան փող. 105, 3-րդ մասնաշենք, 4-րդ հարկ, 421 սենյակ Հեռախոսներ՝ 5—66. 58—44—45։
АДРЕС РЕДАКЦИИ: 375009, Ереван—9, ул. Теряна, 105, корпус 3, комн. 421. Тел. 5—66. 58—44—45:

Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան, Տերյան № 44։
Типография № 2 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Теряна, 44.


Политехник
30 окт. 80
Еще один незабываемый день — вечер в мастерской в Москве

и один незабываемый день